Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

894.3
h-79

Изъ Гос. Университета
Библіотека
Г. Д. Гвоздева-Лесгафта
Ленинградъ

19 NOV 2011

894.3
Ի-79
սր - 9

№ 9101.

ԻՍԼԱՄ

ՄԻ ՉԵՐՔԵԶՈՒՀՈՒ ՊԵՏՄՈՒԹԻՒՆ

1001
679

Հ.Ս.Ֆ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ֆ.Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7-71 1922
Ա. ՍՅՈՒՆԻՔԻ ԱՆՎԱՆ

Թարգմ. տաճկ. Գ.Ր. ԵՂ.

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ
БИБЛІОТЕКА

ՓԻՔԼԻՍ — 1905
Հրատարակ Ա. Քուլթաթելաձէի, Նիկ. 21

Արտատպած «Լուսոյ» ամսագրից

29.04.2013

13.443

Дозволено цензурою, Тифлисъ, 2-го Мая 1905 г.

ԻՍԼԱՄ

Պատմուածք մի Չերքեզուհու

Նոր դարունը նոր ուրախութեամբ դարձեալ բա-
ցեց աշխարհը։ Ռումելի-Հիսարի կանաչկոտ բլուրների
լանջերին ու հովիտներին ակնախտիպ գեղեցկութիւն
տուող գոյնզգոյն ծաղիկների բուրմունքը դարձեալ լցը-
ին մթնոլորտը, բոլորը սկսեցին շարժուել, կենդանա-
նալ, յուսալ, բոլորի դէմքին ուրախութիւն էր փայլում։

Միայն տխուր էր Էմինէն, նա ոչ մի կերպ մխիթա-
րուել չէր կարողանում, երբ յիշում էր, որ ինքը սեփհա-
կան ձեռքերով է սպանել այն երիտասարդին, որ իրան
սիրում էր, ինչոր սկզբունքների համար, որ քաղել ու
սեփհականացրել էր Եւրոպական բրիտանական դաս-
տիարակութեան շնորհիւ։ Երկու տարի է արդէն, որ նա
ամուսնացած է թէև Նուրէդդին-փաշայի հետ, որից
սիրում է և ամեն խնամք վայելում, բայց և այնպէս
չի կարողանում մոռանալ Իբրահիմ-Բէյի սպիտակ միա-
ձև պատանը։

Էմինէն սիրել էր նրան կրքոտ թրքուհու սիրով և
չէր ցանկանում ոչ մի կերպ մոռանալ իր անցեալը, խեղ-
դել իրանում անհպատակ սէրը, նա գտնում էր, որ իր
հոգու սպիտակ ծաղիկը ոռոգուած էր Իբրահիմի կար-
միր արիւնով և սիրել ուրիշին նշանակում էր արիւնալի
տեսարաններ բանալ իր առաջ, և յիրաւի յաճախ նրան
թւում էր, թէ սեղանի սփռոցի կամ անկողնի սաւանի
վրայ կարմիր կակաչներ են բացուում, երբ մի բոպէ
խղճահարուում էր Նուրէդդին-փաշայի դէպի ինքը տա-

ծած սիրոյ հանդէպ և վճռում էր նրան փոխադարձ սէր ցոյց տալ, վճռում էր սիրել իր ամուսնուն։

Նուրէդդին փաշան տեսնելով նրա անտարբերութիւնը՝ շատ էր տխրում, բայց միշտ յոյս ունէր, որ ժամանակը և իր նրան ցոյց տուած խնամքները իր գեղեցիկ կնոջ առողջութիւնը կը վերականգնեն, անցեալը մոռացնել կտան և մի օր երջանիկ կը լինեն իրենք։ Բայց ափսոս, օրերը անցնում էին, և միշտ իր պաշտօնավայրից Շիրբէթի-Խայրիէի վերջին շոգենաւով վերադառնալիս նրան գտնում էր նոյն դրութեան մէջ, ոտի վրայ իրեն սպասելիս կանանոցի դրան մօտ, բռնազբօսիկ ժպիտը շրթներին, արտասուքի հետքերը աչքերին։ Առաւօտից մինչև երեկոյ Զինուորական Մինիստրութեան Դեպարտամէնտում աշխատող յոգնած գեներալին իր կնոջ այդպիսի ընդունելութիւնը աւելի էր յոգնեցնում և նա կամաց կամաց սկսում էր համոզուել, որ այլ ևս երջանկութիւն յուսալ Էմինէի հետ անկարելի է, բայց չէր պակասեցնում իր խնամքները։

Մի երեկոյ նա սովորականից աւելի ուշ տուն եկաւ, որովհետև ստիպուած էր եղել ինչ որ գործի համար Սթամպօլից Բասրա-փաշա գնալ, ուր կանայք ունեցել են միշտ, այսօր էլ դեռ ունեն իրաւունք հեգնելու Կայսրութեան մեծ պաշտօնակատարների ծաղրելի կողմերը, նրանց միրուքի ձևը, օձիքի կեղտը, համազգեստի կարը կամ բաց անելու նրանց ընտանեկան, սիրային, նոյն իսկ քաղաքական գաղտնիքները։ Թէև Նուրէդդին-փաշան շատ քիչ անգամ էր լինում այդ թաղում, բայց բոլոր կանայք նրա ընտանեկան գաղտնիքները գիտէին նոյնքան լաւ, որքան ինքը և իր անցնելու ժամանակ լսում էր նրանց բարձրաձայն բամբասանքները։ Նա յուզուած տուն վերադարձաւ, ուր յուզումը աւելի մեծացաւ, երբ իր կնոջը պառկած տեսաւ։ Էմինէն նրան բացատրեց, որ շատ է նեղում իր ամուսնու պալատում և թէ քիչ խաղաղութիւն պիտի կարողանայ գտնել Թէքքէի գերեզ-

մանատան մօտ իր ամուսնու ունեցած տաղաւարում (Քօշք), ուր կարող պիտի լինի յաճախ գնալ և աղօթել Իբրահիմի գերեզմանի վրայ։

Նախանձի զգացումը ցնցեց Նուրէդդինին բոլոր մարմնով, բայց իր կնոջ առողջութիւնը թանգ գնահատելով նա համաձայնուեց նրա հետ, նոյնիսկ խօսք չբացաւ և՛ իր մասին, ցանկանալով նրան իր մաքերի ու իրեն տանջող յիշատակների հետ մենակ թողնել։ Նա որոշեց Էմինէի մօտ լինել միայն առաւօտները միասին նախաճաշելու համար, ապա գնալ պաշտօնատուն, ուր այժմ աւելի շատ զբաղումներ ունէր, որովհետև յոյնթուրքական պատերազմի պատրաստութիւններն էին տեսնում։ Երեկոյեան նա ուշ էր յետ դառնալու, հետեւաբար հաղիւ առիթ կունենար նրան տեսնելու։ Նա անհանգիստ էր, բայց ոչ մի կերպ չցոյց տուեց այդ և հէնց Էմինէի նիրկայութեամբ Վէբիլի խարճին (ծախսարար) հրամայեց, որ ամառնային քէօշքը (տաղաւար) պատրաստի և օգնի հանրմին այնտեղ հաստատուել։

—

Էմինէն փոխադրուելով ամառնային քէօշքը, իսկոյն ցանկացաւ տեսնել Իբրահիմի շիրիմը։ Նա ուղղեց իր քայլերը դէպի գերեզմանատուն իր նաժիշտներով շրջապատուած։ Նա տեսնում էր ճանապարհին բօստանչիներին, որոնց մէջքը ծռուել էր ծանր բեռներ կրելով, որոնց ուսերը անհաւասար էին և որոնց ճակատը բազմաթիւ խորշոմներով ծածկուած ի վեր էին հանում նրանց ծանր աշխատանքի աշխատաւորներ լինելը։ Բրանքի խոշոր կաթիլները սահում էին արագութեամբ նրանց սևացած դէմքերի վրայով, փայլում մի բոպէ աբեի ճառագայթների տակ, ապա գլորուում ցած Անաթօլու-հիսարի ճանապարհի վրայ գտնուող սև քարերի վրայ։

Գերեզմանատանը այլևայլ շիրիմների մօտ նստած գիւղից եկող կանայք լուռ նայում էին Բոսֆորի գեղա-

ծիծաղ ափերին իրենց կանանչ կամ սպիտակ քողերը (բուրբէնդ) բաց արած, մի քանիսն էլ ջանում էին կրակ ունենալ, որպէս զի տաքացնեն զամբիւղների մէջ անից բերած կերակուրները և նախաճաշեն։ Երեկոյանալու մօտ էր։ Մայրերից ոմանք տխուր երգելով իրենց թեւերի վրայ օրօրում էին փոքր երեխաներին, որ քնացրած տուն տանեն, մի մայր էլ իր ստինքը լիքը տեսնելով դրեց իր նորածին որդու բերանը, որ ագահաբար սկսեց կեանք ծծել մեռածների այդ աշխարհում։

Էմինէն մօտեցաւ գերեզմանատանը, նշանացի հրամայեց իր նաժիշտներին չհեռանալ իրեն և անցնելով արդէն տուն գնալու պատրաստուող կանանց միջով՝ դիմեց դէպի Իբրահիմի շիրիմը։ Ճանապարհին նա քաղում էր գերեզմանաքարերի շուրջը բուսած կակաչների կարմիր ծաղիկները, փետտում նրանց թերթիկները ու ցրում չորս կողմ։ Նա մօտեցաւ իր ցանկացած շիրմին։ Հսկայ կիպարիսները իրենց խաւար ստուերաշատ գլուխները բարձրացնում էին պարզ օդի մէջ և մի տեսակ խորհրդաւոր ճնշում գործում այնտեղ գտնուողների վրայ։ Էմինէն նոյնպէս ճնշուած նայեց թերթաթափ եղած կակաչների վրայ, խոնարհեցրեց աչքերը, երկու ձեռքով սեղմեց վախից թրփրտող սիրտը, ապա ուժաթափ ծունկ չոքեց Իբրահիմի շիրմի յատակեանական ստուերի տակ կանաչած կակուղ խոտերի վրայ։ Յետոյ նա բացաւ քողը, ծնոտը դրեց ափի մէջ ու սկսեց լաց լինել այնպէս, ինչպէս լացում են երկար ժամանակ տանջուող կանայք։

Նա չտեսաւ իր անձկութեան մէջ, թէ ինչպէս Լէյլան մօտենում է իրեն։ Անառակուհին ծունկ չոքեց նրա մօտ, վերցրեց նրա ձեռը, համբուրեց և ասաց.

—Ո՛վ իմ քաղցր դառնուկ, մի ողբար, թող, որ ժամանակը քո սրտին մխիթարութիւն տայ, հանդստացրու քո դողացող հոգին և թոյլ տուր ինձ քո հաղուստի փէշով ծածկել գլուխդ, որպէս զի հեկեկանքը լռութեան գեղեցկութիւնը չաղարտի։

Ապա երկուսն էլ երկար լուռ մնացին և լռութեամբ նրանց հոգիները աւելի լաւ հասկացան իրար։ Նրանք վաղուց էին ճանաչում իրար։ Լէյլան, ժողովրդի այդ աղքատ աղջիկը, գիտէր հարուստ տիկնոջ բոլոր գաղտնիքները, դրա համար էլ Էմինէն նրա հետ մտերմութեամբ խօսեց բոլոր այն կատարուածների մասին, որոնք երկուսին էլ շատ հեռու էին թուում։

Երկրի գոլորշին բարձրանում էր աւելի առատ ինչպէս ցօղ երկրորդ օրը թափուելու համար։ Եւ ինչպէս մեռնող փոքրահասակ երեխաների հոգիները մի դժգոյն ժպիտ թափառում էր նրանց կիսաբաց բերանների վրայ։

Լէյլան յանկարծ կանգնեց և ասաց.

—Մօտենում է իմ ժամանակը, երբ գերեզմանատան կիսաքանդ պատերի վրայ նստած պիտի երգեմ իմ սիրոյ երգերը և հրաւիրեմ նշանաւոր անցորդներին գալ ինձ մօտ սէր գտնելու գիշերային խաւարի մէջ։

Եւ իր ֆարաջան գցեց ուսերի վրայ ու հեռացաւ։

Էմինէն արտասուեց։—«Խեղճ աղջիկ, իր կեանքում միշտ թափառական չէ ունեցել ընտանեկան յարկ, նա եղել է ժողովրդի զաւակ, ժողովրդի հաշուով է կերակրել և իրեն կերակրող ժողովրդին սէր է տալիս, և իրան երջանիկ է զգում, որովհետև իր միջավայրի մէջ է, մինչդեռ ես... ես ցանկացայ մի րոպէ իմ միջավայրին հակառակ գնալ, նոր գաղափարների համար ըմբոստացայ ինձ շրջապատողների դէմ և իբր թէ իմ հայրենիքի սիրոյ համար սպանեցի այն մարդուն, որ ինձ սիրում էր, որ սիրում էր իր հայրենիքը իր հասկացողութեամբ... ո՞վ էր մեղաւոր... ո՞վ էր դատաւոր... ո՞վ էր աւելի խելօք կերպով սիրում իր հայրենիքը։

Եւ նա դարձեալ գրկեց Իբրահիմի շիրիմը, ճակատը դրեց սառը քարին ու սկսեց աւելի բարձր հեկեկալ։

—

Բայց Լէյլան նրա հեկեկանքը չլսեց, նա ինչպէս մի

տեսիլ արագութեամբ հեռացաւ։ Նրա դէմքը հետզհետէ պայծառանում էր, որովհետև մօտենում էր սիրոյ միսիան կատարելու ժամանակը։ Նա վիզը բարձր պահած հսկայ կիպարիսների ստուերով օդի ներդաշնակ ու դիւրեկան հպումից աղդուած վազում էր։ Վերջապէս հասաւ ամենաբարձր պատի մօտ և ոտերը դնելով մի քարից յետոյ միւսի վրայ բարձրացաւ պատի վրայ։ Նա կանգնեց այդ բարձրութեան վրայ, խորը շունչ քաշեց մի քանի անգամ, ապա հանդստացաւ մի քանի րոպէ լուռ, անշարժ, ակնարկը սևեռած իրեն շրջապատող տարածութեան մէջ և սկսեց երգել հանդարտ ու հընչիւն ձայնով իր սիրոյ հրաւերը նշանաւոր անցորդներին։ Երկար երգում էր այդպէս, երբ վերջապէս լոյսի լուսով նկատեց հեռուում հովանոցաձև մի հացիի ստուերում մի պարոնի, որ իսկապէս նշանաւոր էր երևում։

Ուրախ, ժպտուն՝ նա իջաւ և գնաց հանդիպելու այն թանձր խաւարի մէջ, ուր միայն կարող է սէրը ապրել ու մեռնել մարդկանց ակնարկից հեռու։

—Ոսկի կոճակները, որ փայլում են քո կրծքի վերայ, անպայման նշան են քո մեծութեան, այնպէս չէ՞, ասաց նա Նուրէդդինի համազգեստին նայելով։

Փաշան եկել էր իր կնոջը հանդիպելու գերեզմանատանը, առանց նրան տեսնելու մի օր անցկացնել իսկ շատ դժուար էր նրա համար։ Նա լսելով Լէյլայի հաճոյախօսութիւնը, առանց ոչինչ ասելու իր քսակը դատարկեց նրա ծնկների վրայ և արդարանալով որ աւելի լաւ բան չունէր նրան ընծայելու ուզեցանցնել։

—Ոչ մի անառակ կին չի կարող ստանալ աւելի մեծ վարձատրութիւն քան քո սէրը, թող Աստուած օրհնի քեզ, խառնիր քո սէրը իմի հետ։ Ես փող չեմ ուզում։

Նուրէդդինը զարմացաւ։

—Եթէ դու հարուստ ես և շատերը աղքատ, տար այս փողերը Թէքէ, տուր դերվիշ Սաադէթդինին, որ

նա սուպ պատրաստել տայ և բաժանի նրանց, որ քաղցած են։ Իսկ ինձ թոյլ տուր համբուրել քո քաղցրահոտ սուլթանավայել շրթներից և եթէ քո սիրոը կը բռնի ինձ՝ մի արծաթեայ փոքրիկ դրամ իմ ճակտին կպցրած քո շնորհը պիտի լինի ինձ համար։

Նուրէդդինը մոռացաւ մի րոպէ իր կնոջը, նա անզգայաբար նստեց նրա մօտ խոտի վրայ չցանկանալով թողնել նրան, որի մօտ աքանչելի գեղեցկութեան հետ գտնում էր այրող ջերմութիւն, բաներ, որ իր կնոջ սառնութեան բոլորովին հակառակ ազդեցութիւն արին իր վրայ։ Նա նոյն իսկ մտածեց մի րոպէ, թէ արպիսի հանդիպումից յետոյ արժէ միթէ իր կնոջ մօտ լինել։

Եւ ակամայ նրա շրթները արտասանեցին.

—Սա իմ ճակատագիրն էր։

Յետոյ վերկացաւ, նրան տուեց ձեռքը համբուրելու և հեռացաւ նրանից։

—Վաղը դարձեալ գալու եմ այստեղ, եղաւ նրա վերջին խօսքը։

Նուրէդդին-փաշան դեռ երիտասարդ էր թէև, բայց արդէն գեներալութեան աստիճան ունէր։ Նա հարուստ ծնողների զաւակ էր, ունէր Եւրոպական կրթութիւն։ Նա վերադառնալով Եւրոպայից Կ. Պոլիս՝ ինչպէս առհասարակ իր ընկերներից շատերը, ցանկացել էր թրքական կեանքի հոսանքի հակառակ գնալ, նա ընդհարուել էր իր ծնողների և իր մեծաւորների հետ, նա թշնամացրել էր իրան բոլոր այն մարդկանց, որոնց պէտք ունէր յաջող կարիերա ունենալու համար։ Միաժամանակ նա ուսուցչի և լրագրական աշխատակցի պաշտօն էր վարել ուրիշ պաշտօն ձեռք բերել չկարողանալուն համար։ Բայց շուտով նա մեղմացել էր, սկսել էր զիջումներ անել։ Նա ցանկանում էր հայրենիքին ծառայել իբրև զինուորական, պէտք էր զոհել մի քանի սկզբունքներ Սէրասքէրիատում արդիւնաւոր պաշտօն ձեռք բերելու համար։ Զոհողութիւնները իրար հե-

տեսեցին աւելի բարձր պաշտօններ ունենալու յուսով և նա սկսեց մտածել, Սէրասքէր (սպարապետ) դառնալուն պէս՝ նա դարձեալ իր նախկին սկզբունքները կը պաշտպանի և կը մտնի իր ստորադրեալների մէջ։ Նա միայն չէր համաձայնում կանայք ունենալու մտքի հետ, նա միակին էր ուզում լինել, փնտռում էր ինտելիգենտկին և հանդիպելով Շէյխ-ուլ-Իսլամի քրոջ աղջկան, կրթուած Էմինէին, որ նոյնպէս եւրոպական դաստիարակութեան տէր և կողմնակից էր, ամուսնացաւ հետը, իհարկէ յուսալով, որ նախ երջանիկ եւրոպական ընտանիք կը կազմի, ապա Շէյխ-ուլ-Իսլամի օգնութիւնը կը վայելի միշտ։ Բայց շուտով տեսաւ, որ երջանիկ լինել ընտանիքում չի կարող, որովհետև Էմինէն թուրք կին չէ, եւրոպականացել է, գիտէ մտածել։ Կինը միայն սիրել պիտի իմանայ, սկսում էր կամաց ինքն իրեն համոզել երիտասարդ զինուորականը, այսօր նա աւելի խոր է համոզւում այդ բանում։ Տես, որքան տարբերութիւն կայ այս անառակ իսկական թուրք հակումներ ունեցող կնոջ և իր եւրոպականացած կնոջ մէջ. որ նոյն իսկ սպանել է մի մարդու, թէ նա ինչու է հաւատարիմ սուլթանին և կայսերական դահին, սպանել է նրան սիրելով, դա եւրոպական զոհողութիւն է, դա լաւ չէ, բանի որ երկու մարդ են զոհ դնացել դրան, մինչդեռ Լէյլան իր սիրած էակին գիտէ այնքան ջերմաջերմ փայփայել։ Միթէ մի կին ունենալը հէնց մի մեծ մեղք չէ, ինչու Էմինէի համար ինքը պիտի զրկուի հաճոյքներից ու սիրուց։ Դա էլ քրիստոնէական զրկանք է, միթէ պէտք է այդ զրկանքը յանձն առնել։ Ո՛չ, ո՛չ.., փաշան նախ քան քրիստոնեայ լինելը մուսուլման է և մուսուլմանը միայն իբրև մուսուլման կարող է երջանիկ լինել։

—

Իր ընդարձակ կալուածքում զբօսնելիս Էմինէ-հանումը յաճախ էր հանդիպում Լէյլային և բանի անդամ

ցանկացել էր նրան խրատել, որ յետ կենայ վատ արարքներից, բայց Լէյլան կեանքի իրեն պարգևած գեղեցկութիւնից ու բաւականութիւններից չէր ցանկանում զրկել և՛ միւս մահկանացուներին։ Էմինէն չէր յուսահատւում, նա այնուամենայնիւ մի քանի անգամ փորձեց խօսել նրա հետ։

Մի օր էլ վերջին փորձը ուզեց անել։ Նա նկարագրեց, թէ որքան լաւ է պարկեշտ ապրել, միամուսին լինել, ընտանիք ունենալ։ Լէյլան շատ շուտ ընդհատեց նրան և հպարտութեամբ հայեացքը ուղղելով նրա երեսին՝ ասաց,

— Դուցէ դու կը կամենայիր ինձ կարդալ էլ սովորեցնել, որպէս զի ես էլ կարողանամ քեզ նման կրկնել ուրիշների գործածած բառերը... Դու կը կամենայիր դուցէ կապել իմ բերանը ու շղթայել իմ մարմինը կամ յափշտակել իմ բնական զգացողութեան համեմատ ապրելու իրաւունքներս... Բայց այդ անել չես կարող... Քո սրտում սէրը երբէք տեղ չէ բռնել և իհարկէ չգիտես այն էլ, թէ Մուհամմէդը ասել է.—«Խանդաղատանք (շէֆքաթ) ունեցէք միմեանց նկատմամբ»։ Ես հաւատացած եմ, որ եթէ քեզ նման կանայք անառակ լինէին, նրանց մարմնի գեղեցկութիւնը միայն հարուստները պիտի տեսնէին և ձեր մատներին կը փայլէին սիրահարվագրի լուսնարոտի նման շողշողուն ադամանդներ։ Ես ձեզ նման չեմ անում, ես սպասում եմ նշանաւոր անցորդների, որ յոգնած վերադառնում են բանատեղից, (դուցէ նշանաւոր էլ չեն) յամենայն դէպս ես նրանց ցանկանում եմ տալ իմ գեղեցկութիւնը, որ շատ շքեղ է։

Էմինէն իր նիհար ձեռների մէջ թաղցնելով դէմքը ընդհատեց նրան։

—Դու միշտ անպարկեշտ բաներով ես զբաղուած, ասաց նա խորտակուած ձայնով, լռիր ի սէր Աստուծոյ։

Եւ նստեց ճանապարհի եզերքին մի քարի վրայ։

Անառակուհին՝ առանց հասկանալու ի հարկէ, թէ

ինչ է կատարուում իր խօսակցի սրտում, մտածեց, թէ արդէն ասել է նրան ամէն բան և ցանկացաւ հեռանալ։ Էմինէն նրան կանչեց.

—Ես գնում եմ, պատասխանեց Լէյլան, գնում եմ այլ ևս քեզ չհանդիպելու պայմանով։ Դու ամաչում ես ինձ հետ լինել և այդ լաւ չէ։ Գայթակղութեան խոտը արդէն բանում է՝ իմ մազերի նման խիտ՝ իմ սրտից քո սիրտը տանող ճանապարհի վրայ... Ինչպէս բոլոր հարուստները՝ դու էլ եսասէր ես, և ցանկանում ես ինձ բարեկամ մնալ միայն այն դէպքում, երբ ես էլ քեզ նման կը խօսեմ։ Քո աչքերը միշտ յոռի բաներ են տեսնում և չարանում ես, որ իմ աչքերին նոյն յոռութիւնները գեղեցիկ են երևում... Դու ինչպէս քող ունում ես ծածկել իմ աչքերը, մինչդեռ ես ցանկանում եմ միշտ պայծառ տեսնել։ Ինչպէս դու ունես քո գեղեցիկ ձևերը, նոյնպէս ես ունեմ իմոնքը։ Մնաս բարով, Էմինէ հանում։

Եւ ծռուելով նրան խոր թէմէննա արեց (գլուխ տուեց)։

—Մօտեցիր, ասաց չորութեամբ Էմինէն, հնազանդուիր ինձ։

Լէյլան տեղաւորեց իր ծրարը գետնի վրայ և խոնարհ կերպով մօտեցաւ նրան։

Էմինէն նրան քաշեց դէպի ինքը, նրա վիզը գրկեց և համբուրեց նրան «իմ քոյր» կոչելով։

—Գիտեմ, մրմնջաց խեղճ աղջիկը չափազանց զգացուած ու լացակումած ձայնով, գիտեմ, որ դու շատ ես մտատանջուում իմ այս դրութիւնը տեսնելով, բայց իզուր է, որովհետև եթէ ես երբևիցէ վատ բան եմ անում, այդ թոյլտուում եմ իմ յետև և աչքերս միշտ ուղղում եմ իմ առաջ գտնուող բարի բաների կողմը և դրանով միայն կարելի է ուղղել մեր սխալները և ոչ կամաւոր բանտարկութեան մէջ սրտի հառաչները լսելով։ Տեսնելով ձեզ, որ սովորել էք ծովերի խորութիւնները և երկրի երկարութիւնն ու լայնութիւնը չափել և դրա պէս չնչին բաներ, ես գտնում եմ, որ դուք ոչինչ չգիտէք, դուք չգիտէք երկրի մեզ տուած կեանքի նպատակը։ Դուք անցեալի մեռած բաները միայն գիտէք, իսկ ներկայի կենդանութիւնը ձեզ չէ հետաքրքրել երբևիցէ։

Էմինէն ուզեց կանգնել, բայց անառակուհին ծունկ չոքելով նրա առաջ իր մերկ բազուկներով գրկեց նրա ոտները։

—Լսիր, մի բան էլ կայ որ քեզանից թաղցնում էի։ Հոգիս գտնուում է չարագործ կրքերի ազդեցութեան տակ։ Ահա քանի օր է, որ ինձ թւում է, թէ այլ ևս բոլոր մարդկանց չեմ սիրում, այլ մի անծանօթ գըրաւել է ինձ բոլոր էութեամբ։ Նա ամէն երեկոյ մի ժամանց է կացնում ինձ հետ։ Նրա ոյժը մեծ է, հանը՛մ, նա ինձ ձգում է իրեն թաղաւոր առիւծի ուժով, ոտկի է թափում իմ փէշերի մէջ և ինձ ներշնչում է կատարեալ երջանկութեան զգացում իր սիրոյ համբոյրների միջոցով։ Նրա խօսքերը տիեզերքի ներդաշնակութիւնը ունեն, նրանում ես ներշնչեցի բնական սիրոյ հրապոյրները և վախենում եմ, որ այդ հրապոյրներին նա ինձ գերի դարձնի։ Նա ինձ առաջարկում է ապրել իր ապարանքում մենակ իր համար, նա էլ, ինչպէս դու, ցանկանում է իմ ազատութիւնը խլել։ Տես, ինչքան գեղեցիկ է նրա դէմքը...

Եւ նա ցոյց տուեց մի լուսանկար։

Էմինէն նայեց լուսանկարին, նրա սիրտը յորդեց, կարծես ուզում էր կուրծքը խորտակել և դուրս ընկնել։ Արիւնը արագութեամբ նրա բոլոր երակներից վազեց դէպի սիրտը, նա խեղդուում էր։ Մի րոպէ անշարժ մընաց, ապա կանգնեց շատ ուղղահայեաց, անշարժ մնաց մի րոպէ, գլուխը շարժեց, մի րոպէ էլ սպասեց, և սկսեց այնպէս փախչել կարծես գազաններ հալածում էին նրան։

Նա վազում էր այնպիսի մի ճանապարհով, որի վերջը կար մի անդունդ։ Լէյլան մտածեց, որ նրա հետ կարող է սարսափելի վտանգ պատահել. մի րոպէ տատանուեց, ապա բարձր ճչաց ու սկսեց նրա յետևից վազել։

Նա Էմինէին սիրում էր, նա ցանկանում էր նրա կեանքը ազատել, կեանքը շատ քաղցր է, շատ աւելի քաղցր քան հասարակաց դասախօսների պատմած ամենագեղեցիկ հեքեաթների նիւթը։ Նա դողում էր սարսափից, նա մտածում էր, որ եթէ չհասնի գեղեցիկ հանրմին և չկանգնեցի նրան, նրան կը գտնի մի բոպէ յետոյ անկենդան, նրա մարմնի սպիտակ հարթութիւնը ակօսուած կը լինի, նրա ոսկորները ջարդուած, փշրուած։ Բայց Լէյլան նրան կազատի, անպատճառ կազատի, թէկուզ դրա համար ինքը ոչնչանայ և ցատկեց նա մի բարձր ժայռից ներքև, որ կարողանայ Էմինէի առաջը կտրել։

Նա ընկաւ բարձր կակուղ խոտերի վրայ, որոնց զովութիւնը զգաց իր դէմքի ու հոլանի թեւերի վրայ։ Կենսատու թարմութիւնը նրա ծանրացած ճակատը մի բոպէ հանգստացրեց և նա առաջին վայրկեանից զգաց թէ ինչպէս կարմիր արիւնը ապրիլեան ցողի կաթիլների նման վազում էր ճակատից ցած։ Նա ուրախացաւ նոյնիսկ այդ արիւնի միջով տեսնելով Էմինէին, որ գալիս էր իր կողմը։

Նա սրբեց իր ճակատը, վազեց դէպի Էմինէն, ջղաձգաբար նրան ամուր բռնեց և ուժով ձգեց դեպի. ինքն էլ մօտը նստաւ։

Մի քանի քայլ հեռու սպիտակ գրանիտեայ շաղի ծայրին բացւում էր իսկապէս մի անդունդ, ուր ընկնելու վտանգի մէջ էր Էմինէն։

Լէյլան հեռում էր, նրա շնչառութիւնը կարծես պատռում էր կուրծքը։ Արձակելով իր կաշեայ կօրսէտի կոճակները, որ պահում էին ստինքը բարձր, նա լայն բաց

արեց Բրուսիայի դաղի շապիկը։ Բերանը բաց, ծանր շնչելով նա նայում էր իր առաջ և մեքենայաբար սըրբում ճակատից այտերի վրայ հոսող արիւնը։ Վէրքը մեծ չէր, հաւատացած էր, որ շուտ կը բժշկուի, բայց չարժէր այդպիսի վէրք ստանալ մի չնչին կապրիսի համար, որ ունեցաւ Էմինէն։ Նա ցանկացաւ յայտնել իր դժգոհութիւնը այդ առթիւ քաղաքավարի բառերով, բայց ամենախայտառակ հայհոյանքը դուրս թռաւ նրա բերնից։

—Դու ցանկանում էիր ինձ դէպի բարին առաջնորդել և ամենաններելի ու ամօթալի յանցանքն էիր ուզում գործել... Դու ցանկանում էիր անձնասպան լինել գեավուրների նման... Առաջ ուրեմն ցանա քո մեղքերը բաւել, ապա զբաղուիր իմ մեղքերով։ Որքան անմիտ և անարժան բան է այդպիսի խիստ միջոցների դիմելը... Թող անիծուին գեավուրների գրքերը, որ կանանց հեռացնում են իրենց բնական դրութիւնից։ Հագնում էք Պարիզի մօդայով շորեր, որոնց տակ ձեր սիրտը դատարկ է... չներ են գեավուրները...

Եւ նա իր հայհոյանքների տողրակը բացաւ առանց ի նկատի ունենալու, թէ ով է իր ունկնդիրը, և մէկը միւսից աւելի տգեղ ածականներով բնորոշեց քրիստոնէական դաստիարակութեան յատկութիւնները։ Նա լռեց միայն այն ժամանակ, երբ բաւական համարեց իր ասածները քրիստոնէութեան ոչնչութիւնը իմաստ հանելու համար։

Էմինէն լալիս էր։ Լէյլան անհունապէս զգացուեց և խոնարհուելով նրա առաջ համբուրեց նրա ձեռքը և մեղմ հարցրեց.

—Ասա ինձ վերջապէս, ինչ որ ունես սրտում, դուցէ քո կարդացած գրքերի բովանդակութիւններն ես յիշում ու տանջւում։

Վէրքից արիւնը կաթիլ կաթիլ հոսում էր միշտ, Լէյլան ստիպուած եղաւ երկրորդ թաշկինակը հանել

իր կօրսաժի տակից։ Էմինէն տեսաւ նրա կրծքի վրայ խնամքով պահուած բատիստի թաշկինակը, որի նմանը իր ամուսինը նոր էր ստացել Պարիզից։ Նա հառաչեց և ուզեց կանգնել։ Լէյլան նրան պահեց և բոպէական լռութիւնից յետոյ հանդիսաւոր կերպով ասաց.

—Եւրոպական սատանան մտել է քո մէջ ու հաստատուել, լաւ կանես, եթէ գնաս Մարգարէի գերեզմանի մօտ ապաշխարելու։

Էմինէն լուռ էր, նա անարժան էր համարում Լէյլային իր վշտերին խորհրդակից անելու համար, նա չուզեց նրան յայտնել ի հարկէ եւ այն, որ վշտերի պատճառը հէնց այդ ժողովրդի աղջիկն է։ Նրա սիրտը աւելի ճնշուեց, կարծես անարգասաբեր զօրութիւն տիրեց այնտեղ, ինչպէս զօրութիւն տիրում է այն ժայռայատակ հեղեղատներին, երբ բնական ուէ կատաստրոֆով ջուրը դադարում է նոյն տեղով վազել։ Նրա համար ամեն բան վերջացած էր, չարժէր այլեւս ապրել։ Շատ պարզ է, որ Նուրէդդինը վերջապէս պիտի սիրէր ուրիշին։

—Բարձրացիր մէջքիս, որ քեզ տուն հասցնեմ, դու երեխայից աւելի թեթեւ ես, ասաց Լէյլան անհանգիստ նրան նայելով։ Կեանքիս մէջ այսօր առաջին անգամն է, որ ցանկանում եմ հարուստ լինել, որպէսզի իրաւունք ունենայի մտնել ձեր տունը, իմանալ քո դաղտնիքները և օգնել քեզ։

Նա Էմինէին առաջնորդեց բաւական տեղ, մինչև Էմինէի ծառայողներից մէկը, Հասան աղան, իրենց դէմ բուսաւ։

—Փառք Աստուծոյ, ասաց նա ոգեւորութիւն ներշնչող ձայնով, մեր փառաւոր արքայ Սուլթան Աբդիւլ-Համիդը մեր անպարտելի բանակին հրամայել է արշաւել դէպի Յունաստան։

Լէյլան նայեց մի բոպէ Էմինէին, որ հայրենասիրական տենդով վարակուած նրա հետ հնչուն և ուժեղ ձայնով ասաց.

—Ամեն։

Եւ երկու իրարից բոլորովին տարբեր ձեւով դաստիարակուած կանանց աչքերի առաջ պատկերացաւ մի բոպէ պատերազմի դաշտը, ուր Մուհամմէդի ղրկած հրեշտակները իրենց զինուորների հետ միասին արդարադատ սրերով կտրում են թշնամեաց գլուխները, նրանք տեսնում էին իրենց գլխից վերև հարիւրաւոր ձեռների վրայ բարձրացած յաղթական վահանները, որոնց վրայ հանգչում են թշնամեաց առաջնորդների գլուխները։ Բայց իսկոյն Էմինէին թուաց թէ արեւափայլ մթնոլորտի միջով արագութեամբ անցաւ մահուան սարսուռը և իր շուրջը տարածող մարգագետինների կանաչութեան մէջ սկսեցին բսնել, բարձրանալ հովանոցաձև կարմիր ծաղիկներ, որոնց արիւնագոյն թերթերը թափւում էին դալար մարգերի վրայ կեանքից յանկարծակի զրկուած մարդկանց կըտրուած գլուխների նման։

Հասան աղան նայում էր նրան արտասուալի աչքերով, նա հպարտանում էր, որ իր մեծացրած աղջիկը այդքան զգայուն հայրենասէր է դարձել և ցանկանալով նոր ազդեցութիւն գործել երկու կանանց վրայ՝ դիմեց Լէյլային և ասաց.

—Ուրախացիր, ով կին, քո որդուն պատերազմ ենք տանում։

Լէյլան, թէև հպարտ ու ուրախ, չկարողացաւ արտասուքը զսպել և ծունկ չբերեց ծերունի ծառայի առաջ, որ համբուրեց նրա ուսերից ի նշան վշտակցութեան։

—

Էմինէ-հանումը տուն հասաւ ուժասպառ, գունաթափ և մօր կողմից իրեն եղած բոլոր հարցերին՝ նա պատասխանում էր, թէ արեգակը խփել է գլխին, որովհետև առանց հովանոցի էր դուրս եկել տնից։ Նա մտածում էր իր մօրեղբօր դիմել մխիթարութիւն գտնելու յուսով, բայց առայժմ յետաձգում էր՝ մինչև բո-

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
Ա.Ս.Հ.Հ. Պետական Գրադարան
Ереван, Кас...
7/XI

լորովին կը կազդուրուի։ Նա նոյն իսկ չուզեց իր ա-
մուսնուն էլ ոչինչ ասել, չնայած որ այս վերջինս թա-
խանձում էր իրեն։ Էմինէն օրից օր աւելի է տկարա-
նում, բայց և այնպէս նա շատ զգուշութեամբ հսկում
էր Թեսալիայի պատերազմի դաշտը ուղղուելու պատ-
րաստ իր ամուսնուն պէտք եղած ամենաանհրաժեշտ բան-
երի վրայ իսկ։

Նուրէդդինը զբաղուած իր գնալու պատրաստու-
թիւններով այնքան երկար չէր մնում տանը, ուստի իր
զօրանոցը չէր հեռանում Էմինէի մօտից։ Խեղճ մայրը
տեսնելով իր աղջկայ դրութիւնը, աւելի էր անհանգըս-
տանում, մինչև որ ստիպուած եղաւ դիմել իր եղբօր
օգնութեան։

Վերջապէս մի օր կէսօրից յետոյ ոսկի կոճակաւոր
սև սաւանի մէջ գրկուած Էմինէն սպասում էր իրենց
տան աղօթարանում իր մօրեղբօր, որին արդէն խոստա-
վանել էր իր գաղտնիքը։ Ստիպուած լինելով այդ օրը
Սէլամլիքի ժամանակ խալիֆին ներկայանալ՝ Շէյխ-ուլ-
Իսլամը խոստացել էր հարէմ մտնել հէնց որ ազատ
լինէր։

Էմինէն իր մտքերով զբաղուած երկար սպասեց։

Մի ժամ յետոյ ինչպէս հիւսիսային երկիրների ե-
ռեռութական էակներից մէկը ծերունի կրօնաւորը աղօ-
թարանի դռնից ներս սողոսկաց իր սպիտակ փաթթո-
ցով, անցաւ իր քեռաղջկայ մօտով, նշանացի հրամայեց
նրան իրեն հետևել և մտնելով մի փոքրիկ կիսախաւար
սենեակ՝ ասաց նրան.

—Իմ սրտում հոսում է նոյն արիւնը և ըս վիշտը
իմն է իհարկէ...

—Նուրէդդինը ինձ սիրում էր սակայն, ասաց նրան Էմի-
նէն այնպիսի ձայնով, որ նուաղում էր իր շրթների վրայ։

Շէյխ-ուլ-իսլամը գլուխը շուռ տուեց նրանից չցան-
կանալով նրա տանջալի հայեացքը տեսնել։ Մի րոպէ
նրան թուաց, թէ իրենք խորհրդաւոր էակներ են, որ

այս մենութեան մէջ ապաստանած մահուան երկիւղն
էին կրում։

—Մի դանդատուիր, աղջիկս, ասաց նա անսահման
քաղցրութեամբ, դու սպանեցիր այն մարդուն, որը
միայն սիրում էր քեզ։

Էմինէն գլուխը բարձրացրեց և սաւանը ընկնե-
լով նրա ուսերից տարածուեց նրա ոտների շուրջ,
ինչպէս Մարգարէի գերեզմանի ստուերում տարա-
ծուած է սրբազան գորգը։ Նա բոլորովին դժգոյն
կանգնած դողում էր։ Նրա ծիրանի հագուստի փայլը
ինչպէս արիւնալի լոյս ընկաւ նրա գունաթափ դէմքի
և սպիտակ վզի ու ձեռների վրայ։ Նա մրմնջաց։

—Ես նրան սպանեցի ազատելու համար նրանց,
որոնց սիրում էի և որոնց նա մատնել էր։

Եւ խաւարի մէջ կորսուած մի երեխայի չափ վա-
խենալով գոչեց յանկարծ.

—Ա՛խ, հայր իմ, հայր իմ։

Մօրեղբայրը գրկեց նրան.

—Ես ստրջանում եմ, ես զղջում եմ։

—Աղջիկս, ընդհատեց նրան ծանրութեամբ Շէյխ-
ուլ-Իսլամը, զղջումը մի դժգոյն ծաղիկ է, որ բանում
է աւերակների վրայ։ Դու տեսնում ես այժմ, թէ երկու
մարդ ոնց սիրում էին, երկուսն էլ այսօր քեզ թո-
ղել են աւելի գնահատելով քեզանից ժողովրդի զաւակ-
ներին, որոնց գոյութեան առաջնորդը միմիայն իրենց
կանացի ինստինկտներն են, գուցէ և՝ հէնց դրանից է
առաջանում նրանց անվերջանալի և անդիմադրելի շնորհ-
քը, որ տղամարդկանց գերում է։ Նատ կրթուած կա-
նայք իրենց սիրուելու իրաւունքը կորցնում են... Ես
ստիպուած եմ, աղջիկս, ըս միտքը ուղղել միմիայն դէ-
պի իսկական ճշմարտութիւնը... Իբրահիմը ապրում էր
իր հաւատքի, իր միապետի (որին համարում էր հայ-
րենիք) և քեզ համար։ Նրան լոյս աշխարհից դու մղե-
ցիր մահուան խաւարի մէջ... Նա վերջին րոպէում ը

անունը յիշեց... Գնա, ինչպէս բոլոր թշուառները, Մէքքէ ուխտի, ուր կերկրպագես մեր սուրբ Մարգարէի դամբանին և նա քեզ կը ների...

– Ա՛խ, լռեցէք... նրան ընդհատեց իր մեղքերի յիշողութեան ծանրութեան տակ ճնշուած Էմինէն... Ես անիծուած եմ նրանով, որ մատնեցի իմ ցեղի և իմ կրօնի նկատմամբ ունենալիք յարգանքիցս դուրս երջանկութիւն յուսացի։

Նա մրմնջաց անկապ մի քանի խօսքեր, որ նրա հոգու մութ գաղանիքներն էին բացատրում։

—Որպէս թողութիւն քո մեղքերի քեզ հրամայում եմ Մարգարէի շիրմին ուխտի գնալ, ուր քեզ կտան մի թալիսման,որ քո ամուսնուն անպարտելի կը կացուցանի։ Ձեր ուղեկիցների առաջնորդ կը նշանակեմ քո զոհի եղբայր Ալի-բէյին, որ երեք անգամ արդէն Մէքքէ է գնացել։ Քաջ պատերազմիկ Ֆաթմային էլ կտամ իբրև քո նաժիշտների առաջնորդ։

Շէյխ-ուլ-իսլամի ձայնը հեղհեղուկ նուազում էր յուզումից։

Էմինէն ուզեց նրան ընդմիջել։

—Ո՛չ մի խօսք, աղջիկս, շարունակեց կրօնաւորը, սովորիր լռել և կատարել քո պարտքերը ինչպէս բարի մուսուլման։ Գնա Մէքքէ, Հիջազ, աղօթիր Իսլամի համար, աղօթիր քո թագաւորի և նրա բանակներից մեկին առաջնորդող քո ամուսնու համար, աղօթիր մանաւանդ բոլոր տանջուածների համար։ Եթէ այստեղ մնաս, քո տրամաբանութիւնը քեզ շատ կը չարչարի։ Ահա քեզ մի նամակ, որ կտաս Շէյխ Սադուլլահին, որ քեզ կտայ իսկոյն քո ամուսնու փորձանքներից պաշտպանող թալիսմանը։

Եւ նրան իր կրծքին սեղմելով ջերմաջերմ համբուրեց։ Էմինէն բարձրացրեց գլուխը և ցոյց տուեց նրան իր արտասուաթոր դէմքը։ Նրա աչքերը փայլում էին

այն աստղերի վերջին շողերի նման, որոնք յաւիտեանս հանգչելու են։

—

Իր ամուսնու Թեսալիա մեկնելուց մի օր առաջ Էմինէն պիտի ճանապարհուէր դէպի Հիջազ։

Շէյխ-իւլ-Իսլամը գեներալին չթոյլ տուեց ոչ մի առարկութիւն անել, ոչ էլ այս ուխտագնացութեան պատճառը յայտնեցին նրանք։ Պատերազմը արդէն սկսուել էր, կարիք չկար նրա միտքը ուրիշ բանով զբաղեցնելու։ Նրան յայտնեց պարզապէս, թէ իր քրոջ աղջկայ դրութիւնը պահանջում էր երկար ճանապարհորդութիւն հարաւային ծովերում և այդ աւելի լաւ էր, քան մայրաքաղաքում տխուր մենութեան մէջ անցկացնել օրերը։

Երկինքը ամպոտ էր ու սպառնալից։ Ուրականը իր բոլոր ուժգնութեամբ թակում էր, հարուածում հաւասարապէս և կիպարիսների սաղարթախիտ կատարները և կանացի երկար մազերի նման փափուկ խոտերը։ Էմինէն հէնց այդ եղանակին համբուրում էր հարէմի դրան առաջ իր մօր հետ, որ նրան դրկած առաջնորդեց մինչև տան դուռը։ Ալի-բէյը և նրա միւս ուղեկիցները լուռ սպասում էին Շէյխ-իւլ-Իսլամի քրոջ աղջկան և իր հետևորդներին, որ նրան պիտի ծառայէին իր ճանապարհորդութեան ժամանակ։

—Կառքերը պատրաստ են, յայտնեց ծառաներից մինը։

Նախազգալով որ իր տանջուած հոգու պահարան եղող դիւրաբեկ մարմինը ուխտագնացութեան յոգնութիւններին չպիտի դիմանայ՝ Էմինէն աւելի ու աւելի ուժով սեղմում էր մօրը։ Ինչպէս մի երեխայ դժուարիմաց բառեր էր արտասանում, որոնց ըստ երևութին մայրը ուշադրութիւն չէր դարձնում։

—Մի վախենար, աղջիկս, ասաց նա վերջապէս, մի քանի րոպէ յետոյ երկինքը այլ ևս չի արտասուիլ։

Եւ համբուրելով նրա ճակատը նրան բաց դռնից

դուրս մղեց։ Ապա դառնալով իր աղջկայ համար բարեմաղթութիւններ անող ստրկուհիներին ասաց.

—Էմինէ-համբմը իմ հոգու էութիւնն էր, եւրոպական քաղաքակրթութիւնը նրան գողացաւ իմ խնամքի տակից ու դժբաղդացրեց։ Հսկեցէք ձեր երեխաների վրայ, եթէ բաղդը ձեզ կը բաշխի։

Ամբողջ ութը օր Լէյլան ապարանքի շուրջը թրեւում էր Էմինէ-հանըմին ու է կերպով տեսնելու յուսով։ Նա նոյնիսկ համարձակութիւն ունեցաւ Սէլամլիքի դռնապանին հարցնել, թէ հանըմը ճի՞շդ է որ հիշաղ է դնում։

—Կորիր աչքիցս, չան աղջիկ, պատասխանել էր նրան խիստ դռնապանը։

Եւ Լէյլան ամեն օր դռնից քիչ հեռու դանուող մի քարի վրայ գալիս նստում և սպասում էր նրա դուրս գալուն, այնպէս որ երբ նրան նկատեց դէպի կառքը դիմելիս, ճարպիկ շարժումով մօտեցաւ երիտասարդ տիկնոջ և ասաց.

– Մի գնար։ Մնա այստեղ, մեզ մօտ։ Եկ ինձ հետ, գնանք դէպի լեռները, ուր դու կը վայելես կեանքի զուարճութիւնը և մթնոլորտի բուրմունքը։ Եկ և մեր երկուսի հոգիները ինչպէս անցեալում, դարձեալ իրար համար կը բաբախին։

Ալի-բէյին թուաց, թէ նա ծաղրում է Շէյխ-իւլ-Իսլամի քեռ-աղջկան. մի քար վերցրեց և ձգեց նրա վրայ։

—Կորիր, անբարոյական աղջիկ, երևի լեռների վրայ մաքուր ձիւն է իջել, որ դու հովիտ ես իջել։

Էմինէն նրան լռեցրեց.

—Լռիր, սա ինձ սիրում և դուցէ կամենում է մի անգամ էլ կեանքս աղատել։

—

Նուրէդդինի պատերազմի գնալու նախորդ օրը փոթորիկը կործանել էր Լէյլայի գիշերային ապաստանարանի խարխուլ պատերը և խեղճ կնոջը թողել էր առանց որջի։

Շատ մարդիկ, որոնց հետ և՛ իր ապօրինի որդի Մուհամմէդը, ինչպէս կամաւորներ, առանց ոչ է առաջնորդի, ճանապարհուել էին դէպի Թեսալիա, ուր նրանց մղում էին հայրենասիրի բնազդները։ Նրանք արշալոյսին ճանապարհուել էին իրենց բնակավայրից երեք անգամ Աստուծոյ օրհնութիւնը խնդրելով։

Նրանք հպարտութեամբ անցնում էին ճանապարհներով և երբ տեսան, որ Լէյլան հիացման և բաշալերութեան բառեր է արտասանում, կանգնեցին և իրենց ձեռները նրան տուին համբուրելու։

Երբ հերթը հասաւ Մուհամմէտին, նա մի րոպէ բարձրացրեց գլուխը և աչքերը նրա աչքերի վրայ դնելով մայրական սիրոյ խանդաղատանքը ուղեց նրան յիշատակ թողնել, նա կամեցաւ և համբուրել իր որդուն, բայց մի մարդ նրան յետ մղեց խստութեամբ ասելով.

—Կին...

Նա մի րոպէ ցանկացաւ յայտնել, որ Մուհամմէդը իր որդին է, բայց չուզեց ապօրինի որդու կրելիք անպատուութիւնը հասցնել նրան, շուռ տուեց գլուխը, որ թագցնի իր տանջանքների դէմքի վրայ թողած արտայայտութիւնը։

Այդ օրից նա թափառում է բլրի լանջերի վրայ իր շորերի ծրարը միշտ իր հետ ման ածելով։ Հօտերը անցնում էին նրա առաջով, բայց այլ ևս հովիւը չէր համարձակւում նրա շրթները համբուրել, որովհետև իրենց գլխի վերև ճախրող սև թռչունների տեսքը նրան տխուր մտքեր էր ներշնչում։ Երեկոներն էլ այլ ևս չէր սպասում անցորդներին, որոնց մի ժամանակ սէր էր բաշխում, այլ ոչէ ծառի տուերում նստած լսում էր բնութեան մեռելային ներդաշնակութիւնը։

Մի օր յանկարծ նրա մօտ երևեցաւ Նուրէդդին-փաշան, մօտեցաւ նրան և դրկեց։

Այդ վերջին գիշերն էր։

Փաշան նրան այնքան մօտ էր պահում իր կրծքին,

որ կարծես երկուսի կենդանութիւնը մէկի ընչառութեամբ էր արտայայտուում։ Լէյլան լացում էր, բայց ջանում էր իր հեկեկանքը անլսելի դարձնել շրթները իր սիրեցեալի շրթներին պինդ սեղմելով։

—Խնդրում եմ, ասում էր փաշան, գնա, ապաստանիր իմ տներից մէկում։ Գնանք այս դիշեր ընելու մեատաքսեայ դուչակի վերայ։ Ես քեզ սիրում եմ, ինչպէս երբէք իմ կեանքում ոչ մէկին չեմ սիրել, աղերսում եմ, եկ ինձ հետ։

Լէյլան չպատասխանեց, բռնեց նրա ձեռը, քաշեց դէպի մարգագետինը լուսնի բաղցր լոյսի տակ։ Ցօղով ծածկուած գժգոյն ծաղիկները լուսնի շողերի տակ փայլում էին։ Ծառերի սաուերում մոխրատիպիկները թռչկոտում էին։

— Այն զուարճութիւնը, որ ես պարգևում եմ մարդկանց, ասաց նա հանդիսաւոր ձայնով, թռչունների գրկընդխառնութեան նման է։ Սառը գետնի վրայ սիրոյ պայը աւելի մեծ է և երջանկութիւնը տևողական չէ։ Ինչպէս գիտես, իմ բերանը սիրոյ սափոր է, որտեղից անցորդները քաղցրութիւն են ծծում և իմ աչքերը խաղաղ ծովերի նման են, որոնց մէջ նրանք երևակայում են, թէ պիտի գտնեն իրենց կեանքի գաղտնիքը։ Ես չգիտեմ ով ես դու, չեմ էլ ցանկանում իմանալ։ Ինչ էլ լինես ուրիշի համար, միայն ես քեզ ճանաչում եմ այնքան ժամանակ, որքան կը կամենամ իմը լինել. այդքանն էլ ինձ բաւական է արդէն։ Շնորհակալ եմ քո բարեացակամութեան համար, ես չեմ ընդունի քո առաջարկը։ Գնա պատերազմի, ինչպէս շատերը գնացին. իսկ երբ մէկ էլ իրար կը հանդիպենք, քո աչքերի մէջ նայելով ես կիմանամ, թէ ինձ յիշել ես միշտ... Ես այստեղ անշարժ պիտի սպասեմ քո գալստեան։

—

Երկնքի կապոյտը գրկել էր Թեսաղիայի լեռների բարձունքները և նրանց լողացնում էր թափանցիկ մը-

շուշով, որի ներքև ծաղկած նշենիներով շրջապատուած բարձրանում էին յունական մի հին վանքի աւերակները ինչպէս խորհրդանշան մի կորած հաւատքի։

Նուրեդդին փաշան իր բանակը դրել էր այդտեղ առաւօտից ի վեր և քաշուելով իր վրանը խոր մտածութեանց մէջ էր ընկել։

Ցունաց դէմ իր մղած կռիւների ընթացքում երիտասարդ գեներալի դաղափարները բոլորովին փոխուել էին։ Նա այլևս այնքան ջերմ հաւատք չունէր այն սկզբունքների անսխալականութեան մասին, որ ունէր առաջ և որ ցանկանում էր իր հայրենիքում տարածել։ Ճակատամարտից ճակատամարտ իր առաջնորդած մարդկանց տոկունութիւնը, պարզ ու սիրելի զուարթութիւնը, միամիտ հաւատը, անձնուիրութիւնը և առաքինութիւնը նրա առաջ բոլորովին այլ աշխարհ էր բացում։ Մուսուլմանական կրթութիւնը մոռնալու գերբնական ճիգեր գործ դնելուց յետոյ նոյնքան գերբնական աշխատութիւնով տարիների ընթացքում ձեռք բերած ու սեփականացրած իր տէօրիաներից մի բացարձակ համոզում միայն մնացել էր նրանում, այն որ մինչև այդ օրը ի զուր է անցկացրել իր ժամանակը։

Նստած մի փոքրիկ սեղանի վրայ կարտէներով և պլաններով ծանրաբեռնուած մի սեղանի առաջ՝ նա վոյ փոքրիկ դռնից դուրս էր նայում, նայում էր ծաղկած նարնջենիների վերջալոյսի ճառագայթների հանդէպ գունաւորուած ծաղիկներին, հին վանքի աւերակներին և դիմացի բլուրներին և մտածում էր իր կին Էմինէի մահուան մասին, որ իրեն յայտնել էր խոր թէմմէնայից (գլուխ տալ) յետոյ Մէքքէյից եկող Ալի-բէյը մի վճռական ճակատամարտի նախորդ օրը։

—Նա մեռաւ Մէքքէյի դիմաց, ասել էր Էմինէի պահակախմբի գլխաւորը, ես ամեն միջոց գործ դրի նրա տանջանքները մեղմացնելու համար, բայց իզուր։ Նա իմ և Շէյխ Սադուլլահի հետ մենակ էր իր վերջի

խօսակցութեան ժամանակ, նա չցանկացաւ իր վերջին կամքին հաղորդակից անել աղախիններին ու պահնորդներին, որոնք նրան մօտեցան մահից յետոյ նրան պատանելու համար։ Նա ինձ յանձնարարեց ձերդ պայծառափայլութեան յանձնել Շէյխի տուած թալիսմանը և ահա ձեզ եմ ներկայացնում։

Նուրէդդին փաշան բարձրացրել էր իր գլուխը ստուգելու համար միայն, թէ Ալի-Բէյը իրեն չի ծաղրում և երբ տեսել էր նրա խոնարհ գլուխ տալը, ասել էր նրան հանդարտութեամբ.

—Շնորհակալ եմ, դուք իմ անձի մօտ ատտաչէ կը մնաք, ձեր գունդը իմ հրամանատարութեան տակ է, առայժմ գնացէք հանգստանալու։

Երկրորդ օրը ճակատամարտի ամբողջ տևողութեան ընթացքում նա իր հրամանները տուել էր հանդարտ ու սառնարիւն կերպով. բայց երեկոյեան, երբ մենակ էր մնացել, նրան թուացել էր, թէ լսում է Ալի-Բէյի ձայնը և տարջացել էր, որ ամուսնացել էր Էմինէի պէս մի կնոջ հետ, որ որքան ցանկութիւն էր առթում, այնքան սիրոյ զգացումը յետ էր մղում։ Եւ թէև նա ամեն մի դժբաղդութեան հանդէպ սառնարիւն էր եղել, բայց այս անգամ հակառակ իր կամքին անձնատուր էր եղել մելամաղձոտութեան և ցանկանալով դրան վերջ տալ, սկսել էր ամեն երեկոյ իր հին բարեկամներից մէկի այցելութիւնը ընդունել, որ պարիզեան մի մեծ թերթի թղթակից էր։

Այդ երեկոյեան էլ նոյն թղթակիցը գտնում էր նրա վրանում և գանգատւում, որ դեռ Թեսաղիայումն է գտնում, նա կարօտել էր Պարիզը իր հաճոյքներով։ Նա չէր կարող այլևս առանց գեղեցիկ կանանց ապրել, մինչդեռ անիծուած պատերազմը դեռ երկար տևել էր սպառնում։

Փաշան թայլ տուեց, որ ընկնի մօնօկլը մեծ դղրդոցով և կարտէնների տակ թաղնուած ծխախոտի տուփից մի սիգար վերցնելով վառեց և սկսեց նայել իր խօսակցի վրայ՝ հասկանալու համար թէ նրա խօսածները ինչ տպաւորութիւն են թողնում հէնց իր վրայ և,

—Սիրելի բարեկամ. ասաց նրան, այն հաճոյքները, որոնց մասին խօսում էք, դուցէ իմ մտքի վրայ տեսական ազդեցութիւն թողնէին, եթէ ես չճանաչէի թափառական մի թուրք անառակուհու, որ ինձանում ներշնչեց անբուժելի ու խելագարացնող սէր։ Նրա մարմինը գեղեցկութեան հրաշալիք է։

Թղթակիցը աչքուժով հետաքրքրուած իր աթոռը մօտեցրեց գեներալին։

—Ես գտնումեմ, վերջացրեց փաշան, որ ձեր կիսաշխարհի կանայք սիրոյ լիակատար բաւականութիւնը չեն տալիս մարդկանց, որովհետև արդէն նրանց զգացումները արհեստականացած են։

Լսուեց այդ րոպէին դրսից խաղաղ լռութեան մէջ մի գեղեցիկ ու հնչիւն ձայն, որ երգում էր.

—Ով որ ախուր է և մենակ, թող գայ ինձ մօտ, ես նրան կը մխիթարեմ։

Նուրէդդինը ձգուեց և յուզումից խեղդուած ձայնով իր վրանի շուրջը գտնուող թիկնապահներից մէկին հրամայեց.

—Թող այդ կնոջը այստեղ բերեն, դուցէ լրտես է, թող իսկոյն լռեցնեն նրան։

—

Լէյլան մտնելով փաշայի վրանը, ուզեց գեներալի ձեռքը համբուրել, ինչպէս սովորութիւն ունեն ժողովրդի աղջիկները, երբ բարձրաստիճան մարդու են հանդիպում։

—Ես եկայ Մուհամմէտին փնտռելու, որ դեռ չի վերադարձել Անատոլու-Հիսար, և որքան ուրախ եմ, որ քեզ եմ հանդիպում, յաղթական փաշա, որի քաջութեան գործերը սրանից յետոյ մայրերը պիտի երգեն իրենց մուսուլման որդիների օրօրոցների մօտ։ Խնդրում եմ,

հրամայիր, որ իմ որդուն յայտնեն, թէ ես եկել եմ և լուր բերեն ինձ, թէ նա դեռ երկար կը մնայ այստեղ։

—Թող մեզ մենակ, ասաց փաշան ֆրանսերէն լեզուով միակ պահնորդին, որ նրա առաջ կանգնած խոնարհաբար նրա հրաւէրներին էր սպասում։

Ինչպէս է հասել նա Թեսալիա։ Ո՞վ է նրան առաջնորդել։ Ինչքա՞ն դեղեցիկ է մնացել նա այսքան երկար ճանապարհորդութիւնից յետոյ։ Նա իսկապէս եկել է Մուհամմէտի թէ՞ իրեն համար։ Եւ այդպիսի ուրիշ հարցեր ունէր նրան տալու Նուրէդդինը նրան իր մօտ նստած տեսնելով։

Փաշան համբուրում էր նրա շրթներն ու աչքերը նրանից խոստում ստանալով, որ հէնց երկրորդ օրը մի պահակի հետ կը համաձայնուի Սթամբոլ վերադառնալ։ Վերջապէս քիչ տատանումից յետոյ հարցրեց իրեն ամենից շատ աւելի հետաքրքրող խնդրի մասին։

—Ես եկել եմ թէ քեզ, թէ Մուհամմէդի համար, ինկատի ունենալով, որ պատերազմի դաշտում ձեզ երկուսիդ միասին կը գտնեմ։ Ես անկանոն զինուորների ուղեկցութեամբ եկայ մինչև այս աւերակները, ուր չորս օր ձեր գալստեան էի սպասում և այժմ, փառք Աստուծոյ մենք իրար տեսնում ենք։ Ինչ որ է, այդ ոչինչ, դու միայն այն ասա, թէ Մուհամմէդը արդարացրել է իր վրայ դրուած յոյսերը, ասաց նա հայրենասէր մօր հոգացողութեամբ, որի մէջ պատերազմասիրի բնաւորները զարթնել էին։

Նուրէդդինը, որ իր եւրոպականացած թուրքի արտաքինի տակ պահել էր դեռ իր ցեղական բնաւորները, այդ միջոցին գերեզմանից գլուխ բարձրացնող մի խալիֆի հպարտ տեսքը ստացաւ։ Նա մօնոկլը աչքից վերցրեց և շատ քաղցր ու հնչուն ձայնով ասաց Լէյլայի առանձին ինչպէս յաղթական երգի բառեր.

—Մուհամմէտը կռուում էր ինչպէս առիւծ և ես միայն նրան վստահացայ Իսլամի դրօշակի պահպանութիւնը։

Լէյլան դողաց յուզումից։

Մի րոպէ լուռ լսեցին իրենց հոգու ձայնը, որ մուսուլմանական կրօնի մօտալուտ յաղթութեան գաղափարով ուռճացած նրանց հնչառութեան աւելի ներդաշնակութիւն էր տալիս։

Լէյլան ասաց.

—Քո մարդիկը ինձ արգելում էին երգել, «փաշան քեզ կը բանտարկի,» ասում էին նրանք, մինչդեռ մի գաղտնի ձայն ինձ հարկադրում էր երգել, «դու գտնուում ես քրիստոնէական վանքի աւերակների մօտ, ասում էր նա։ Երբ ինձ բերին քո վրանը, ես իսկոյն ճանաչեցի քեզ, թէև միրուքդ շատ է երկարել, բայց չուզեցի քեզ սիրոյ խօսքերով դիմել առաջին րոպէից, որովհետև մի դեսպան և քո մեծամեծները քեզ մօտ էին։ Դու ցանկանում ես այժմ, որ ես պահակախմբով վերադառնամ Սթամբոլ, ուր ի հարկէ ինձ կը տեղաւորեն քո տներից մէկում։ Հարուստ մարդիկ ցանկանում են միշտ աղքատների միակ զուարճութիւններն էլ նրանց ձեռից խլել, բայց հոգ չէ, ես կը հնազանդուեմ քեզ, որովհետև դու իսլամի պաշտպան դարձար։

Երկրորդ օրը արշալոյսին նա պատրաստ էր մեկնելու և որովհետև իրան այլևս ազատ չէր համարում, նա ծածկել էր իր դէմքը եաշմակով (քող), որ անցորդները չտեսնեն։ Նուրէդդինին այդ բանը ուրախացրեց, նա մօտեցաւ նրան, բռնեց ձեռքը և մօտեցրեց շրթներին։

—Մի մեծ տխրութիւն համակել է իմ սիրտը, ասաց փաշայից բաժանուելիս Լէյլան. ահա չորս ամիս է, որ լսել եմ մի հարուստ տիկնոջ, Էմինէ հանրմի մահուան մասին. նա ինձ նկատմամբ միշտ բարի էր եղել։ Նա մեռաւ Հիջազում։ Նրան ես շատ էի սիրում, նրան խոստովանել էի իմ դէպի քեզ տածած սէրը, նոյն իսկ ցոյց էի տուել նրան քո լուսանկարը... Նա քո դիմագծերը տեսնելուն պէս սկսեց ինչպէս խենթ կենդանի վազելով հեռանալ իմ մօտից... Թեղճ...

Նուրէդդինը նրա դաստակը բռնեց և յուզումից դողացող ձայնով.

—Ի՞նչ ես արել այդ, ասաց, Էմինէ-հանըմը իմ կինն էր։

Լէյլան իրան զգաց մի սարսափելի դժբաղդութեան ծանրութեան տակ խորտակուելիս, նա գուշակեց իսկոյն, որ ինքն ակամայ պատճառ է դարձել Էմինէի մահուան և դանդաղ շարժումով Նուրէդդինին իրանից հեռացրեց.

—Միայն դու ես մեղաւոր, ես չէի իմանում ոչինչ քո կեանքից, և հիմայ, որ ծանօթ եմ Էմինէի թշուառութեան պատմութեան հետ, ես քեզ համար էլ նոյնը պիտի լինիմ, ինչ որ եղել եմ շատերի համար։

Նա թողեց բանակը առանց մի բառ իսկ ասելացնելու։ Յունական վանքի աւերակների մօտով անցնելիս նա տեսաւ ու ճանաչեց Ալի-բէյին, որ Էմինէի մեկնելու օրը իր վրայ քար էր արձակել և երկար նայեց նրան։

—

Այդ օրը Ալի-բէյը նստած զինուորների մի խմբի մէջ, ցանկանում էր նրանց պատմել իրենց հոգին կոթող ազնուացնող մի պատմութիւն։ Նրանց գլխի վերև ծաղկած էին նշենիները, որոնց ծաղիկներին սիրոյ համբոյր էր տալիս բնութեան քնքոյշ շունչը, սպիտակ թերթերը դանդաղ յուզումով դողում էին, պոկւում, մի բոպէ տարածութեան մէջ թռչում դողդողում, ապա ընկնում էին գետնի վրայ, ուր իսկոյն վարդի գոյն էին ստանում։

Զինուորները անհամբեր սպասում էին, թէ ինչպէս պիտի բացատրի իրենց հոգու գաղտնիքները իրենց հարիւրապետը, որ ամեն մի ճակատամարտից յետոյ նրանց հետ խօսում էր Աստուծոյ գործերի մասին։

—Նայեցէք այս գեղեցիկ ծաղիկներին, իմ առիւծներ, և ձեր սիրտը ուրախութիւնով պիտի լցուի։ Մեռնել Իսլամի համար սուրբ և գեղեցիկ բան է, որովհետև ձեզ համար է պահում Աստուած ծաղկազարդ դրախտը, ուր յաւիտենական երջանկութիւն պիտի վայելէք։

Ալի-բէյը գիտակից զինուորական էր, նա սովորութիւն ունէր իր զինուորներին մահուան ենթարկուելու պատրաստել։

—Նախ քան ձեր հոգին Աստուծոյ կը յանձնենք, դուք պարտաւոր էք թշնամու վեց գլուխ կտրել։ Սթամպոլին մենք տիրել ենք արիւնով և երբէք յետ չպիտի տանք, որովհետև յափշտակիչ քրիստոնեաները իրենց անձնական շահերի համար ցանկանում են մեր խալիֆի մայրաքաղաքը մեր ձեռից խլել, մինչդեռ մենք նրան պէտք ունենք մեր սուրը հաւատքի պայծառութեան համար։

Բոլոր ունկնդիրները միաձայն գոչեցին.

—Փառք Աստուծոյ. թող Սուլթանը ապրի հազար տարի։

Մի ծերունի դիմեց Ալի-բէյին։

—Մենք քեզ լսում ենք։ Դու ասացիր, որ ուզում ես մեզ պատմել մի նոր պատմութիւն, մի դէպք քո Հիջազում կատարած վերջին ճանապարհորդութիւնից, մեզ համար նոյնքան հետաքրքրական է լսել նորից սակեայ մաղերով Սուլթանուհու և Մուհամէդդի մաղերից մի փունջ պարփակող ադամանդի պատմութիւնը, թէև շատ անգամներ ենք լսել։

—Զինուոր, ասաց Ալի-բէյը, ձեզ պատմելիք պատմութիւնս սուրբ է, նա յուզում է իմ սիրտը։ Ես ցանկանում եմ խօսել մի յայտնի թուրք կնոջ մասին, թող նրա յիշատակը օրհնուի։ Նա մեռաւ իր հայրենեաց սիրոյ և իր հաւատքի համար Հիջազում, ուր գնացել էր Շէյխ-իլ-Իսլամի հրամանով մի սուրբ թալիսման բերելու և ահա հէնց այդ թալիսմանի շնորհիւ է, որ մեր գեներալ Նուրէդդին փաշան մեզ առաջնորդում է յաղթութիւններից յետոյ դէպի նոր յաղթութիւններ։ Լսեցէք։

Մէքքէյի դիմաց Էմինէ-հանըմը ուժասպառ այլ ևս չէր կարողանում իր ձիու թամբի վրայ նստած մնալ։ Մեր առաջ տարածւում էր արծաթափայլ աւազներով

ողբերուն փշերի և բաղրջուկների մի ընդարձակ դաշտ մինչև հորիզոնը։ Էմինէ-հանըմը հոգեվարքի մէջ էր։ Նրան գրկեցի ինչպէս գրկում են մի երազուն երեխայի, որին չեն ցանկանում զարթեցնել և դրի նրա տանջուած մարմինը դեռնի վրայ միակ ծերթինու զով ստուերի ներքոյ, որպէսզի աւելի հանգիստ լինի նրա դեռ կենդանի հոգին։ Նրա ոսկեգոյն մազերը գրկել էին դժգոյն այտերը, նրա թարթիչները նուրբ ու թափանցիկ էին ինչպէս նոր ծնուած հաւալուսնի փետրիկները, նրա աչքերի լոյսը փայլում էր ինչպէս վերջալոյսի ճառագայթ նուրբ մետաքսի տակից, նրա մանուշակագոյն զգեստը լայն բացուած ցոյց էր տալիս նրա նիհար կուրծքը, որ իր նիհարութիւնով հանդերձ գեղեցկութեան օրինակ էր...

—Էֆէնդիմ, նրան ընդհատեց ծերունի մի զինուոր, դուք պատմում էք, ինչպէս գեավուրները սովորութիւն ունեն պատմել։ Մեզ հանըմի մարմինը չի հետաքրքրում, պատմիր նրա հոգու մասին։

Ալի-Բէյը փակեց աչքերը, դանդաղ մի դժգունութիւն նրա դէմքը ծածկեց և մեղմ կերպով շարունակեց նա։

—Նրա շուրջը մթնոլորտը մեղմ ծածանւում էր, երկնքի ջերմութիւնից քաշուած ցողը ոսկեգոյն գնդակների նման օրօրւում էր տարածութեան մէջ, ծիթենին քաղցր ստուեր էր ձգել նրա վրայ, նա կարող էր խաղաղ մեռնել։ Եւ նա մեռնում էր յոգնութեան շնորհիւ, ուխտագնացութիւնը նրան սպանեց։ «Շէյխ Սադուլլահը շուտ կը գայ, հարցրեց նա նուազկոտ։ «Սպասիր, համբերիր, իմ ազնիւ քոյր, պատասխանեցի ես։ «Մահը համբերել չգիտէ, ասաց նա վերջապէս, տես, նրա ստուերը իմ ճակատի վրայ է շրջում»։ Գնա Շէյխի մօտ և նրան առաջնորդիր այստեղ, որովհետև ես չեմ կարող գնալ դէպի նա, իմ մարմինը վազուց է, որ մեռել է, միայն հոգիս է ապրում։ Ցանուն Աստուծոյ, խնդրում եմ քեզ, գնա Շէյխին բեր, որովհետև ես չեմ ցանկանում մեռնել առանց խոստումս կատարելու, առանց ստանալու այն թալիսմանը, որ բանակները առաջնորդում է դէպի յաղթութիւն։ Լսիր, եթէ դու չես հնազանդուիլ իմ հրամաններին, դու դաւաճանած կը լինես քո Աստուծուն ու քո գեներալին»։ —«Ամա՛ ինձ, ընդմիջեցի նրան անձկութեամբ, Շէյխ-ուլ-Իսլամի հարէմում իմ եղբայր Իբրահիմին սպանողը դու ես եղել։

«Դժգոյն մի կարմրութիւն վերջին անգամ ներկեց նրա այտերը և մի դերբնական ուժով, որը միշտ նրան կեանքի սարսափների հանդէպ անդրդուելի էր պահել, նա հանդարտ ու վեհ շեշտ տուեց իր խօսքերին. «Ես սպանեցի, այո՛, քո եղբօրը մի կացնով, նրա արիւնը և ուղեղը ցատկեցին իմ դէմքի և իմ ձեռների վրայ։ Նա մի դաւաճան էր, որ ցանկանում էր սպանել իր գեներալին, նա ինքը խոնարհեցրեց գլուխը իմ առաջ, որ արդարադատ գործը կատարելիս ինձ օգնի։ Եթէ հաւատում ես, որ քո արիւնը կապտամորուի քեզ մաքուր թողնելուց և դու էլ կը դաւաճանես քո գլխաւորին, իմ շատ սիրելի ամուսնուն, տուր այդ դաշոյնը, որ գօտկումդ ունես և առանց ձեռս դողալու քեզ էլ կը սպանեմ»։ «Մաշալլահ», (թող Աստուծոյ կամքը լինի), «Եաբարրի (Տէր), ով կասի, որ դու կին ես, դուշեցի հիացած. ով իմ աչքերի լոյս, ով սակի և քնքոյշ բաշեր ունեցող առիւծ, մի մեռնիր, ես կը հնազանդուեմ քեզ։

«Նա երկար լսում էր դէպի Մէքքէյի մզկիթները վազող իմ նժոյգի ոտնաձայնը։ Երբ վերադարձայ Շէյխ-Սադուլլահի հետ, նա մեռնելու մօտ էր, կամենում էր վերջին կարևոր գործը կատարել։ Շէյխը մօտենալով նրան կանգնեց շատ ուղիղ նրա մնարի մօտ, իր սպիտակ ֆարաջայի մէջ նա թւում էր մեր սուրբ մարգարէ Մուհամմէդը, որ եկել է մեռնող մուսուլմանուհուն օգնելու։ Նա ծեր էր և դրեթէ ոչինչ չէր տեսնում, միայն նա իր դողդոջուն ձեռներով շօշափում էր ու ճանաչում

մարդկանց։ Եւ այդ ձեռները նա հանդարտ դրեց Էմի-նէի երեսի վրայ ու ասաց. «Խօսիր, աղջիկս, ես քեզ այժմ ճանաչում եմ»։ «Ես Շէյխ-իլ-Իսլամի առաքեալն եմ, պատասխանեց նա շնչասպառ ձայնով. ես քեզ եմ բերում նրա մի նամակը, նա իմ կրծքի վրայ է քրտինքով թրջուած։ Ես իմ մեսիաս արդէն կատարեցի, դու էլ մի ուշանար թալիսմանի սուրբ խօսքերը գրել, որոնց ազդեցութեամբ մեր բանակը յաղթական պիտի դուրս գայ այս ճակատամարտում։

«Ցեռոյ դառնալով ինձ աւելացրեց. «Առաջին բանակում հարիւրապետ Ալի-բէյ, ինչպէս հաւատարիմ ծառայ քո միապետին և քո հրամանատար իմ սիրելի ամուսին գեներալ Նուրէդդին-փաշային խակոն կը գնաս Թեսալիա, ուր Շէյխ-Սադուլլահի գրած խօսքերը կը յանձնես քո հրամանատարին»։

Նա մեռնելու պատրաստ էր այլևս, նրա թոյլ կուրծքը խորտակւում էր, նրա դէմքը գնալով աւելի մեռելային արտայայտութիւն էր ստանում։—«Շէյխ Սադուլլահ... շատ եմ տանջւում... ես սիրում էի իմ զօրական ամուսնուն, որ այսօր մեր փառաւոր միապետի բանակներից մէկն է առաջնորդում, նա առանց վշտանալու ինձ թոյլ տուեց գալ Հիջազ և իրանից հեռու մեռնել մենութեան մէջ, ինչպէս մի վատ սերմ, որ բամին ձրգում է հովի տարածութեան մէջ։ «Խաղաղութեամբ մեռիր, աղջիկս, քո ձայնի հնչիւնը և քո դէմքի գծերը, որոնց շոշափում եմ, ինձ ամէն բան բացատրեցին։ Ես ճանաչում եմ քո հոգին, դու բարձրագոյն սէրն ես, որ մարդիկ յետ են մղում, որովհետև չեն կարողանում հասկանալ։ «Ես մեռնում եմ Հիջազի սուրբ հողի վրայ, Մէքբէյին շատ մօտ առանց մուէզզինի ձայնը լսելու...»։

«Շէյխը իր արտասուաթոր դէմքը ուղղեց դէպի Մուհամմէդի դերեզմանը և ուղիղ կանգնած, ձեռներով ականջները պահած անսահման քաղցրութիւն ունեցող ձայնով երգեց.—«Ալլահու աքբէր (Աստուած մեծագոյն է)։

Մի խաղաղ ժպիտ Էմինէի դէմքի վրայ սփռեց չը տեսնուած գեղեցկութիւն, նա աչքերը դանդաղ բաց արաւ, նայեց չորս կողմը և... փակեց յաւիտենապէս։

—Ամէն, ասացին զինուորները ծանրութեամբ։

—Թող Աստուած Էմինէ-հանըմի հոգին իր սուրբ հովանաւորութեան ներքոյ առնի, ասաց հնչիւն ձայնով ամենատարիքով զինուորը հայեացքը ձգելով Ալի-բէյի վրայ, որ գողում էր։

Զինուորները խոնարհ և ուշադիր սպասում էին իրենց հարիւրապետի հրամանին, որ գնան հանգստանան։

—

Բոլորովին յոգնած և անտանելի զրկանքների ենթարկուած երկար ճանապարհորդութիւնից վերադառնալով Լէյլան նստել էր իր ընակարանի քանդուած պատի վրայ և դիտում էր Բոսֆորը։ Մի չարագուշակ շունչ տեսարանի ներդաշնակութիւնը ոչնչացրել էր։ Այլ ևս չէին երևում սպիտակ առագաստաւոր նաւակները, որ հանդարտ սահում էին ջրի վրայով, չէին նկատւում և խաւար ջրերի վրայ նաւերի ֆոսֆորափայլ հետքերը, և բոպացիների Անատոլու-Հիսարից բիչ հեռու չինած մի զօրաբանի ծխնելոյզից բարձրացող թանձր ծուխը ծածկում էր ամէն բան։ Շինում էին նրանք մի օձանելիք, որի մասին բոլորովին չէր լսել Լէյլան, բայց ինչպէս երևում է քրիստոնեաները շատ էին սիրում այդ օձանելիքը, որը մեծ բանակութեամբ էր ծախւում։

Հին ճարտարապետութեան նմոյշներ եղող գեղեցիկ պալատները այրուել էին դեռևս բանուորների ձեռքով, որոնք այժմ ամէն կիրակի և երկուշաբթի օրերը շրջագայում էին նրանց աւերակների մէջ զինու ծակող հոտ արտաշնչելով օդի մէջ։

Խաղասէր թուրքերը, որոնք սովորութիւն ունէին ամէն երեկոյ սպիտակ դիշերային շորեր հագած Բոսֆորի ափին գտնուող իրենց տների պարտէզներում նստել ու նարգիլէ ծխել, այժմ ցաւով տեսնում էին

թանձր գործարանային ծուխը, որ բարձրանում էր, բարձրանում, ապա հանդարտ նստում նրանց սպիտակ շորերի վրայ հազարաւոր սև բծեր թողնելով նրանց վրայ։ Իրենց գոյութիւնը կեղտոտող նոր քաղաքակրթութեան այդ զզուելի բանին դիմադրել չէին կարող, և իրանց տանջուած հայեացքները ջանում էին ուղղել հակառակ կողմ, ուր տեսնում էին արևի ճառագայթները վերջալոյսի ժամանակ ծովի փրփուրների հետ խաղ անելիս։

Բանուորների գալուց յետոյ շրջակայքը սկսուեցին անապատանալ, կորուեց նոյն իսկ այն հսկայ հինաւուրց ծառը, որ աղբիւրի վրայ հովանի էր անում և որի ստուերի տակ հարսներն ու աղջիկները հանգիստ զրոյց էին անում։ Լէյլան տեսնելով այս բոլոր փոփոխութիւնները մահու չափ տխրում էր և այլ ևս չէր համարձակւում իր սիրոյ երգերով յոգնած անցորդներին հրաւիրել իր մօտ։ Գործարանի մարդկանցից մի քանիսը ցանկացել էին նրան սպանել, որովհետև մերժել էր իր սէրը նրանց, ուրիշներ էլ ցանկացել էին նրան կողոպտել, նրանց աչքը չէր կարողանում տանել և այն քիչը տեսնել, որ ունէր ինքը։ Նա վախեցած եկել ապաստանել էր դերվիշ Սաադէթդինի մօտ, որ նրան տեսնելով վրդովուած ասել էր հանդարտութեամբ.

—Հանդարտ, աղջիկս, դու խորտակում ես մեր հանդստութեան ներդաշնակութիւնը։

Դերվիշ Սաադէթդինը շատ ուրախ էր, որ դժբաղդ անառակուհին վերջապէս ապաստան է գտել, բայց նրան դիւր չէր գալիս, երբ այս վերջինը շարունակ յիշեցնում էր նրան գեղեցիկների ներկայութիւնը, որը բարի դերվիշը ցանկանում էր մոռանալ։ Բացի այդ անառակուհին խռովում էր նրա դաշտային բաւականութիւնները իր չարաճճի աշխուժութեամբ։ Դառները, թռչունները, նոյնիսկ սոֆիմանները (աստուածարանութեան ուսանողներ) նրանից վախում ու հաւաքւում էին թէքէյի շեմքի վրայ։

Մի օր էլ Լէյլան սիրոյ ցոյցեր սկսեց անել։ Դերվիշի հոգին խռովուեց և թէև մինչև այդ օրը չէր ցանկացել նրան համոզել անառակութիւնը թողնել և պարկեշտ կերպով ապրելու մասին մտածել, որովհետև հաւատացած էր, որ ոչ մի անառակ կին չի կարող պարկեշտ դառնալ, նա այնուամենայնիւ ուզեց այս անգամ փորձել։

—Աստուած տուել է քեզ այնպիսի գեղեցկութիւն, որ շատ քչերին է տալիս և որ սիրելի է տեսնել, բայց ինձ արած քո սիրոյ առաջարկութիւնը խելքդ գտնելու թեան հետևանք չէ։ Ես Սթամբոլ գնալիս միշտ քեզ համար այլ և այլ դեղեր էի բերում, որ դու կարողանաս քո մարմինը աւելի թարմ ու գեղեցիկ դարձնել, որը քեզ շատ էր դրաւում. բայց եթէ դու դեպի ինձ քո յարգանքը կը պակասեցնես, ես վերջ կտամ իմ գնումներին, որոնք ինձ այնքան անհանգստութիւն են պատճառում, որովհետև չգիտեմ պայծառ կարմիրը թէ դժգոյն կարմիրն է սազում քո մարմնին։ Դու զարդարիր քեզ ինչպէս մի գեղեցիկ վարդ, բայց երբէք մի ցանկանար մտերմական յարաբերութիւնների մէջ մտնել ինձ հետ, որովհետև այն ժամանակ ես քեզ անառակ կը կոչեմ և իմ եսի համար քեզ դուրս կանեմ այստեղից, իսկ ինչու այդ անել, երբ իրար հետ հաշտ կարող ենք ապրել Աստուծոյ մեզ ցոյց տուած այս տեղում։

Լէյլան նրա մօտից հեռացաւ այնպիսի քայլերով, որոնցով արտայայտում էր աւելի շատ հոգու բան մարմնի յոգնածութիւն։

Նա մենակ էր և այդ մենակութիւնը իրեն սարսափեցրեց մի րոպէ։ Եւրոպացի բանուորները հետևում էին նրան, անպատկառ ակնարկութիւններ անում, ցոյց տալիս նրան արծաթեայ դրամներ բոլորի ներկայութեամբ։

Գիւղի երեխաները տեսնելով այդ հետևում էին նրան ու գոչում.

—Չի ամաչում, չի ամաչում, գեղեցիկների բարեկամ է դարձել։

Նա ամօթխած ու սարսափած կրծքին սեղմեց ծանր կաշեայ կօշիկները և սկսեց փախչել բոկոտն։ Նա յետ էր նայում երբեմն ստուգելու համար թէ գործարանի բանուորները իրեն հետևում են։ Մէկը աղաղակեց.

—Անառակ, անառակ։

Կանայք հաւաքուած ադրի եզրին սկսեցին նրան բամբասել, աղամարդիկ արճարաններից դուրս էին վազում նայելու նրա վրայ, մի երեխայ աւելի առաջ գնաց, այն է մի մեծ քար ձգեց նրա յետևից գոռալով.

—Ատուած աչքերդ հանի, որ դեռվուրներին թոյլ ես տալիս համբուրել։

Նա աւելի արագ սկսեց փախչել։

Խաղաղասէր մի կրօնաւոր իր մզկիթի դռնից դուրս եկաւ և մտնելով ժողովրդի մէջ ասաց.

—Այս աղջիկն էլ, գառնուկներս, Ատուծոյ արարած է, նա սրան գոյութիւն է տուել, երևի նրա համար, որ սա էլ պէտք է մարդկութեան։ Մի խառնուէք այնպիսի գործերի մէջ, որ հասկանալ չէք կարողանում, իսկոյն գնացէք ձեր տները։

Բարի մուսուլմանները հնազանդուեցին նրան։ Նա մենակ հետևեց Լէյլային, որին բանուորները այլ ևս չէին հետևում և կանչեց նրան.

—Սպասիր, աղջիկս, ես եմ, Հօջա-Էֆէնդին, քեզ ասելիք ունեմ։

Լէյլան կանգնեց։

—Հոգիս, ասաց Մօլլան, այստեղի գաղափարները փոխուել են, բարքերը այլ ևս առաջուայ արժանաւորութիւնն ու ծանրութիւնը չունեն, գործարանում բանող Եւրոպացիները տակնուվրայ են արել ամեն ինչ։ Այլ ևս այս տեղերը մի շրջիր։ Եթէ մենք մենակ լինէինք, դու կարող էիր անել ինչ որ ուզենայիր և ոչ մի բոպէ մենք բեզ չէինք ցոյց տալ, թէ նկատել ենք քո արածները։ Ես քեզ ներում եմ .. Թող քրիստոնեայ միսիոնէրները երևակայեն, թէ քեզ նման կանանց կարելի է ուղղութեան բերել քարոզներով։ Ես այդպէս մտա-

ծել չեմ կարող, հոգիս... Արա ինչ որ լաւ ես կարծում, առիւծս, և թող Ատուած քեզ օրհնի, քանի որ քեզ ստեղծել է։ Մի օր դու անպայման լաւ կը լինես, հաւատում եմ ես դրան։

Ցեռոյ ձեռքը մեկնեց նրան համբուրելու ու հեռանալով նրանից մտաւ բարձր մինարէաւոր իր մզկիթը։

—

Երկրորդ օրը Լէյլան բարձրացաւ իր տան աւերակների վրայ և նստեց ամենաբարձր տեղը։ Նա մտածում էր թողնել Պօլիսը, ուր դեռվուրները մուտք էին գործել ու խանգարում էին բարի մուսուլմանների կենցաղավարութիւնը, և գնալ Հիջազ, ուր դեռ միմիայն Մուհամմեդ մեծ մարգարէի հետևողներն են իրաւատէր, բայց...

Ցանկարծ նշմարեց Նուրէդդին-փաշային, որ պատերազմից յաղթանակով վերադարձել ու եկել էր ժողովրդի աղջկայ, մուսուլման աղջկայ սէրը խնդրելու։ Լէյլան վազեց դէպի նա և ասաց նրան.

—Ես քո հրամանների տակ եմ, փաշա, ինչպէս ցանկանաս, կապրեմ այնպէս, որովհետև դեռվուրները այս գործարանը հիմնելով իրենց բանուորների միջոցով ինձ անհանգստացնում են։

Մուսուլման փաշան իրան երջանիկ զգաց։

ГОСУДАРСТВЕННАЯ БИБЛИОТЕКА
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. ГОСУДАРСТВЕННАЯ БИБЛИОТЕКА
7/I. 1922
ՄՈՍԿՎԱ, Ալեքսանդրովսկայա
Ա. ՄԱՅԻՆԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0389620

73.443